## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԷՐԱՅՏԱՐԵԱՆ, ՈՐ Ի ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ

Սիրելի Սրբազան.

Յաւարտ Ձեր ծառայութեան՝ իբրեւ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ, համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ գոհունակ սրտով յայտնում Մեր բարձր գնահատանքը, որ հովուական ու առաջնորդական Ձեր գործունէութիւնը արդիւնաշատ է, եկեղեցաշէն ու ազգօգուտ ձեռքբերումներով:

Սիրելի Սրբազան, շուրջ քառասուն տարիներ, որպէս հոգեւոր սպասաւոր ասպուածասէր մեր ժողովրդի, Ձեր կարելին ի սպաս էք դնում հանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Աստուածաշնորհ առաքելութեան արդիւնաւէտ իրականացման: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ «կենաց խօսքը» քարոզելու առաքելութեանը ծառայել էք հաւատարմօրէն, ամենայն սիրով ու նուիրուածութեամբ: Տարիներ շարունակ բարեջան առաջնորդութեամբ Դուք Վրաստանում բնակեալ մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին զօրացնում էք Աւետարանի լոյսով՝ նրանց հայեացքներն ուղղելով դէպի հայրենի երկիրը մեր եւ Սուրբ Էջմիածինը:

Գնահատելի է, որ քահանայագործութեանը զուգընթաց Դուք զբաղւում էք նաեւ գիտական գործունէութեամբ: Ձեր աշխատութիւնների ու դասագրքերի միջոցով շատերը հաղորդ են դառնում տոմարագիտութեանը, Ձեր ջանքերով արդեն երեսուն տարիներ հրապարակւում են Մայր Աթոռի պաշտօնական օրացոյցները, որոնցով առաջնորդւում են մեր Եկեղեցու հոգեւոր դասն ու բարեպաշտ ժողովուրդը:

Սիրելի Սրբազան, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով, ընդառաջելով Վրաստանի հայոց թեմի Թեմական խորհրդի, ինչպէս նաեւ վիրահայ հասարակա-

կան ու մշակութային կազմակերպութիւնների եւ բարեկաշտ հաւատացեալների խնդրանքներին, Հայրապետական այսու Կոնդակով սիրով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատւոյ շքանշանը:

Ի խորոց սրտի մաղթում ենք, որ Ամենակալ Տէրը Իր հանապազ օրհնութեան եւ ողորմութեան ներքոյ քաջառողջ արեւշատութիւն ու բիւր բարիքներ պարգեւի Ձեզ՝ ազնիւ, բարի ու հաւատարիմ Իր ծառային:

Թող Տէրն անսասան պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 21-ն Յունուարի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 76